

ԽՈՐՀՐԴԻ 1989 թվականի նոյեմբերի 30-ի ՀՐԱՀԱՆԳ

Աշխատավայրում աշխատողների կողմից անհատական պաշտպանության միջոցների օգտագործման համար առողջության և անվտանգության վերաբերյալ նվազագույն պահանջների մասին (89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածում նշված երրորդ առանձին հրահանգ) (89/656/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովի առաջարկը (1), որը ներկայացվել է Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ Պայմանագրի 118ա հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների միջոցով պետք է նվազագույն պահանջներ ապահովի՝ ուղղված հատկապես աշխատանքային միջավայրում կատարվող բարելավումները խրախուսելուն, աշխատողների առողջության ու անվտանգության համար առավել մեծ պաշտպանություն երաշխավորելուն, քանի որ, նշված հոդվածի համաձայն, պետք է խուսափել նման հրահանգներով վարչական, ֆինանսական և իրավական սահմանափակումներ սահմանելուց այնպիսի եղանակով, որը հետ կպահի փոքր և միջին ձեռնարկություններ ստեղծելուց և զարգացնելուց,

քանի որ աշխատավայրում անվտանգությանը, հիգիենային և առողջությանը վերաբերող իր ծրագրի մասին Հանձնաժողովի հաղորդագրությունը (4) նախատեսվում է աշխատավայրում անհատական պաշտպանության միջոցների օգտագործման մասին հրահանգի ընդունում,

քանի որ Խորհուրդն իր՝ 1987 թվականի դեկտեմբերի 21-ի «Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության մասին» բանաձևում (5) նշել է մոտ ապագայում իրեն՝ աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության կազմակերպմանը վերաբերող նվազագույն պահանջներ ներկայացնելու՝ Հանձնաժողովի մտադրության մասին,

քանի որ անհատական պաշտպանության միջոցներ օգտագործողի առողջության և անվտանգության ավելի բարձր մակարդակ երաշխավորելու համար նախատեսված նվազագույն պահանջների հետ համապատասխանությունն էական նշանակություն ունի աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցում,

քանի որ սույն Հրահանգն «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածում (6) նշված առանձին հրահանգ է, և քանի որ նշված հրահանգի դրույթները, հետևաբար, ամբողջությամբ կիրառվում են աշխատավայրում աշխատողների կողմից անհատական պաշտպանության միջոցների օգտագործման նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

քանի որ սույն Հրահանգը գործնական քայլ է՝ ուղղված ներքին շուկայի սոցիալական ուղղվածության ձևավորմանը,

քանի որ պաշտպանության հավաքական միջոցներին առաջնահերթություն է տրվում անհատական պաշտպանության միջոցների նկատմամբ, և քանի որ գործատուից պահանջվում է տրամադրել անվտանգության սարքավորում և ձեռնարկել անվտանգությանն ուղղված միջոցառումներ,

քանի որ սույն Հրահանգով նախատեսված պահանջները չպետք է առաջացնեն անհատական պաշտպանության միջոցների փոփոխություններ, որոնց նախագծումը և արտադրությունը համապատասխանել է Համայնքի՝ աշխատավայրում անվտանգությանն ու առողջությանը վերաբերող հրահանգներին:

քանի որ դրույթ պետք է սահմանվի այնպիսի նկարագրությունների վերաբերյալ, որոնք անդամ պետությունները կարող են կիրառել անհատական պաշտպանության միջոցների օգտագործման վերաբերյալ ընդհանուր կանոններ սահմանելիս,

քանի որ վերջին անգամ 1985 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված 74/325/ԵՏՀ որոշմանը համաձայն՝ այս բնագավառում առաջարկներ մշակելու նպատակով Հանձնաժողովը խորհրդակցել է Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Կարգավորման առարկան

1. Սույն Հրահանգը, որը 89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածի իմաստով երրորդ առանձին հրահանգն է, սահմանում է աշխատավայրում աշխատողների կողմից օգտագործվող անհատական պաշտպանության միջոցների համար նախատեսվող նվազագույն պահանջներ:
2. 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են 1-ին պարբերությամբ նախատեսված ամբողջ շրջանակի նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի՝ ավելի սահմանափակող և (կամ) հատուկ դրույթներին:

Հոդված 2

Սահմանումը

1. Սույն Հրահանգի նպատակներով՝ անհատական պաշտպանության միջոցներ են բոլոր այն միջոցները, որոնք կրում կամ բռնում է աշխատողը և որոնք նախատեսված են աշխատավայրում նրան անվտանգությանը և առողջությանը վնաս հասցնելու հավանականություն ունեցող մեկ կամ ավելի վտանգներից պաշտպանելու համար:
2. 1-ին պարբերության մեջ նշված սահմանմամբ բացառվում են՝
 - ա) սովորական աշխատանքային հագուստը և համազգեստը, որոնք հատուկ նախատեսված չեն աշխատողի անվտանգությունը և առողջությունը պահպանելու համար. բ) արտակարգ իրավիճակների և փրկարար ծառայությունների կողմից օգտագործվող սարքավորումները.
 - գ) անհատական պաշտպանության միջոցները, որոնք կրում կամ օգտագործում են ռազմական, ոստիկանական և պետական մյուս գործակալությունները.
 - դ) ավտոճանապարհային տրանսպորտի միջոցների համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները.

ե) սպորտային սարքավորումները.

զ) ինքնապաշտպանության կամ զսպման սարքավորումները.

է) ռիսկերն ու անհարմարությունները հայտնաբերելու և ազդանշանելու շարժական սարքերը:

Հոդված 3

Ընդհանուր կանոնը

Անհատական պաշտպանության միջոցներն օգտագործվում են այն դեպքերում, երբ կոլեկտիվ պաշտպանության տեխնիկական միջոցներով կամ աշխատանքի կազմակերպմանն առնչվող միջոցառումներով, մեթոդներով կամ ընթացակարգերով ռիսկերից խուսափել կամ դրանք բավարար չափով սահմանափակել հնարավոր չէ:

ԲԱԺԻՆ II

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4

Ընդհանուր դրույթներ

1. Անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն անվտանգության և առողջության մասով նախագծման ու արտադրության վերաբերյալ համապատասխան համայնքային դրույթներին:

Անհատական պաշտպանության բոլոր միջոցները պետք է՝

ա) համապատասխան լինեն ներառված ռիսկերին՝ ինքնին չհանգեցնելով որևէ լրացուցիչ ռիսկի.

բ) համապատասխանեն աշխատավայրում առկա պայմաններին.

գ) հաշվի առնեն էրգոնոմիկական պահանջները և աշխատողների առողջական վիճակը,

դ) որևէ անհրաժեշտ ձևափոխություն կատարելուց հետո այն կրողի համար հարմար լինեն:

2. Եթե մեկից ավելի ռիսկերի առկայությունը աշխատողի համար միաժամանակ մեկից ավելի անհատական պաշտպանության միջոց կրելու անհրաժեշտություն է առաջացնում, ապա այդպիսի միջոցները պետք է համատեղելի լինեն և շարունակեն արդյունավետ պաշտպանություն ապահովել տվյալ վտանգից կամ վտանգներից:

3. Անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պայմանները, մասնավորապես՝ դրանք կրելու ժամանակահատվածը, որոշվում է ռիսկի վտանգավորության աստիճանի, ռիսկի ենթարկվելու հաճախականության, յուրաքանչյուր աշխատողի աշխատակայանի առանձնահատկությունների և անհատական պաշտպանության միջոցների աշխատանքի հիման վրա:

4. Անհատական պաշտպանության միջոցներն սկզբունքորեն նախատեսված են անձնական օգտագործման համար:

Եթե հանգամանքները պահանջում են, որ անհատական պաշտպանության միջոցները կրեն մեկից ավելի անձինք, ապա համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ ապահովելու համար, որ այդօրինակ օգտագործումը տարբեր օգտագործողների համար չառաջացնի առողջական կամ հիգիենիկ որևէ խնդիր:

5. 1-ին և 2-րդ պարբերություններով պահանջվող անհատական պաշտպանության յուրաքանչյուր միջոցի վերաբերյալ ձեռնարկությունում և (կամ) հաստատությունում տրամադրվում և հասանելի է դարձվում համապատասխան տեղեկություններ:

6. Անհատական պաշտպանության միջոցները գործատուի կողմից տրամադրվում են անվճար, որն էլ ապահովում է դրանց բարվոք աշխատանքային վիճակն ու բավարար հիգիենիկ պայմանները՝ անհրաժեշտ պահպանման, վերանորոգման և փոխարինման միջոցով:

Այնուամենայնիվ, անդամ պետություններն, իրենց ազգային գործելակերպին համապատասխան, կարող են անհատական պաշտպանության որոշակի միջոցների արժեքի մեջ ներդրում ունենալու խնդրանքով աշխատողներին դիմելու հնարավորություն նախատեսել այնպիսի հանգամանքներում, երբ այդ միջոցների օգտագործումը տվյալ աշխատավայրի համար բացառված չէ:

7. Գործատուն առաջինը դրա մասին տեղյակ է պահում աշխատողին այն ռիսկերի վերաբերյալ, որոնց դեմ անհատական պաշտպանության միջոցներ կրելը նրա համար պաշտպանություն է ապահովում:

8. Գործատուն կազմակերպում է վերապատրաստում և, հարկ եղած դեպքում, անհատական պաշտպանության միջոցներ կրելու ցուցադրումներ է կազմակերպում :

9. Անհատական պաշտպանության միջոցները կարող են օգտագործվել նախատեսված նպատակների համար՝ բացառությամբ հատուկ և բացառիկ հանգամանքների:

Այն պետք է օգտագործվի ցուցումներին համապատասխան: Այդպիսի ցուցումները պետք է աշխատողների համար հասկանալի լինեն:

Հոդված 5

Անհատական պաշտպանության միջոցների գնահատումը

1. Անհատական պաշտպանության միջոցն ընտրելուց առաջ գործատուից պահանջվում է գնահատել, թե արդյո՞ք անհատական պաշտպանության միջոցը, որը նա նախատեսում է օգտագործել, բավարարում է 4 (1) և (2) հոդվածի պահանջներին:

Գնահատումն ընդգրկում է՝

ա) այնպիսի ռիսկերի վերլուծություն և գնահատում, որոնցից հնարավոր չէ խուսափել այլ միջոցներով,

բ) այն բնութագրերի սահմանումը, որոնք անհատական պաշտպանության միջոցները պետք է ունենան, որպեսզի արդյունավետ պաշտպանություն ապահովեն (ա)–ով նախատեսված վտանգների դեմ՝ հաշվի առնելով ցանկացած վտանգ, որն այդ միջոցը կարող է ինքնին առաջացնել,

գ) անհատական պաշտպանության առկա միջոցների բնութագրերի համեմատությունը (բ)–ով նախատեսված բնութագրերի հետ:

2. Առաջին պարբերությամբ նախատեսված գնահատումը պետք է վերանայվի, եթե դրա տարրերից որևէ մեկում փոփոխություններ են արվել:

Հոդված 6

8) Օգտագործման կանոնները

1. Չխախտելով 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածները՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ անհատական պաշտպանության միջոցների օգտագործման համար սահմանվեն ընդհանուր կանոններ և (կամ) այնպիսի դեպքերի և իրավիճակների վրա տարածվող կանոններ, երբ գործատուն պետք է անհատական պաշտպանության միջոցներ տրամադրի՝ հաշվի առնելով Համայնքի՝ այդպիսի միջոցների ազատ տեղաշարժի վերաբերյալ օրենսդրությունը:

Այդպիսի կանոններում պետք է նշվեն, մասնավորապես, այն հանգամանքները կամ ռիսկային իրավիճակները, որոնց դեպքում, չհակասելով կոլեկտիվ պաշտպանության միջոցներին տրվող առաջնահերթությանը, անհատական պաշտպանության միջոցների օգտագործումն անհրաժեշտություն է:

I, II և III հավելվածները, որոնք համարվում են ուղեցույցներ, այդպիսի կանոններ սահմանելու համար օգտակար տեղեկատվություն են ներառում :

2. Առաջին պարբերությամբ նախատեսված կանոնները ճշգրտելիս անդամ պետությունները հաշվի են առնում ռիսկերի, կոլեկտիվ պաշտպանության միջոցների և անհատական պաշտպանության միջոցների հետ կապված ցանկացած էական փոփոխություն, որը պայմանավորված է տեխնոլոգիական զարգացումներով:

3. Անդամ պետությունները խորհրդակցում են առաջին և երկրորդ պարբերություններով նախատեսված կանոնների վերաբերյալ՝ գործատուների և աշխատողների կազմակերպական հարցերի շուրջ:

Հոդված 7

Աշխատողների համար տեղեկատվությունը

Չհակասելով թիվ 89/391/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածին՝ աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները տեղեկացվում են աշխատողների առողջության և անվտանգության ուղղությամբ ձեռնարկվող բոլոր միջոցների մասին, եթե աշխատավայրում աշխատողներն անհատական պաշտպանության միջոցներ են օգտագործում:

Հոդված 8

Աշխատողների խորհրդակցությունը և աշխատողների մասնակցությունը

Աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների խորհրդակցությունն ու մասնակցությունը սույն Հրահանգով, ներառյալ՝ դրան կից հավելվածներով կարգավորվող հարցերի շուրջ իրականացվում է 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածի համաձայն:

ԲԱԺԻՆ III

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 9

Հավելվածների ճշգրտումները

I, II և III հավելվածների՝ խիստ տեխնիկական բնույթի փոփոխությունները, որոնք բխում են.

- անհատական պաշտպանության միջոցների վերաբերյալ տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտացման հրահանգների ընդունումից և (կամ)

- անհատական պաշտպանության միջոցների ոլորտում տեխնիկական առաջընթացից և միջազգային կանոնակարգերի ու մասնագրերի կամ գիտելիքների մեջ կատարվող փոփոխություններից,

ընդունվում են թիվ 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 10

Եզրափակիչ դրույթներ

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը գործողության մեջ են դնում 1992 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են կամ արդեն ընդունել են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

3. Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ սույն Հրահանգի դրույթների գործնական կիրարկման վերաբերյալ հաշվետվություն են տրամադրում Հանձնաժողովին՝ ներկայացնելով գործատուների և աշխատողների տեսակետները:

Հանձնաժողովը տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեին:

4. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ ու Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտե սույն Հրահանգի կիրարկման վերաբերյալ պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում՝ 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների լույսի ներքո:

Հոդված 11

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 1989 թվականի նոյեմբերի 30-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Ժ. Պ. Սուասոն

1) ՊՏ թիվ C 161, 20. 06. 1988թ., էջ 1,

ՊՏ թիվ C 115, 08.05.1989թ., էջ 27 և

ՊՏ թիվ C 287, 15.11.1989թ., էջ 11:

2) ՊՏ թիվ C 12, 16. 01. 1989թ., էջ 92 և

ՊՏ թիվ C 256, 09. 10. 1989թ., էջ 61:

3) ՊՏ թիվ C 318, 12. 12. 1988թ., էջ 30:

4) ՊՏ թիվ C 28, 03. 02. 1988թ., էջ 3:

5) ՊՏ թիվ C 28, 03.02. 1988թ., էջ 1:

6) ՊՏ թիվ L 183, 29.06.1989թ., էջ 1:

7) ՊՏ թիվ L 185, 09.07.1974թ., էջ 15:

8) Տե՛ս Հանձնաժողովի հաղորդագրությունը (ՊՏ թիվ C 328, 30.12.1989թ., էջ.3):

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՌԻՍԿԵՐԻ
ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՌԻՍԿԵՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ

Բարձրությունից ընկնելու դեպքեր

Հարվածներ, կտրվածքներ, ազդեցություն, ջարդվածքներ

Ծակող հարվածներ, կտրվածքներ, քերծվածքներ

Տատանում

Սայթաքում, բարձրությունից ընկնելը

ՋԵՐՄԱՅԻՆ

Ջերմություն, հրդեհ

Ցուրտ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ

Ոչ իոնացնող

Իոնացնող

Աղմուկ

ՔԻՄԻԱԿԱՆ

ԱԵՐՈԶՈԼՆԵՐ

Փոշի, մանրաթելեր

Գազեր

Գոլորշիներ

ՀԵՂՈՒԿ ՆՅՈՒԹԵՐ

Ընկղմվելը

Ցայտեր, շիթեր

ԳԱԶԵՐ, ԳՈԼՈՐՇԻՆԵՐ

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ

Վնասակար մանրէներ

Վնասակար վիրուսներ

Միկոզ առաջացնող սնկեր

Ոչ մանրէաբանական կենսաբանական հակազեններ

ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԸ

ԳԼՈՒԽ

Գանգ

Ականջներ

Աչքեր

Շնչառական ուղիներ

Դեմք

Գլուխն ամբողջությամբ

ՎԵՐԻՆ ՎԵՐՋՈՒՅԹՆԵՐ

Ձեռքեր

Բազուկներ (մասեր)

ՍՏՈՐԻՆ ՎԵՐՋՈՒՅԹՆԵՐ

Ոտնաթաթեր

Ոտքեր (մասեր)

ԱՅԼ

Մաշկ

Իրան-որովայն

Արտաաղիքային ուղիներ

Մարմինն ամբողջությամբ

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՉ ՍՊԱՌԻՉ ՑԱՆԿ-ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳԼԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Պաշտպանիչ սաղավարտներ, որոնք օգտագործվում են արդյունաբերության մեջ (հանքերում, շինարարական հրապարակներում, արդյունաբերական այլ նպատակներով),
- գլխամաշկի պաշտպանություն (գլխարկներ, բոննետներ, հերացանց՝ ակնապանակով կամ առանց դրա),
- պաշտպանական գլխածածկ, (բոննետներ, գլխարկներ, անջրանցիկ գլխարկներ և այլն՝ կտորից, ջրապաշտպան կտորից և այլն):

ԼՍՈՂԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ականջախցան և նմանատիպ հարմարանքներ,
- լրիվ ձայնամեկուսացում ապահովող սաղավարտներ
- ականջապաշտպան ծածկոցներ, որոնք կարող են հարմարեցվել արդյունաբերական սաղավարտներին
- ցածր հաճախականության մագնիսական ինդուկցիայի հանգույցներ ընկալող սարք ունեցող ականջապաշտպանիչներ
- երկկողմ կապ ապահովող պաշտպանիչ սարք:

ԱԶՔԵՐԻ ԵՎ ԴԵՄՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- ականոց,
- պաշտպանիչ ականոց,
- ռենտգենյան, լազերային, ուլտրամանուշակագույն, ինֆրակարմիր, տեսանելի ճառագայթահարման պաշտպանիչ ականոցներ,
- դիմակալներ
- աղեղային եռակցման դիմակներ և սաղավարտներ (ձեռքին, գլխին կամ պաշտպանական սաղավարտին ամրացվող դիմակներ):

ՇՆՉԱՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- փոշու ֆիլտրեր, գազի ֆիլտրեր և ռադիոակտիվ փոշու ֆիլտրեր,
- օդի մատակարարումն ապահովող, մեկուսացնող պարագաներ,
- շնչառական սարքեր, որոնք եռակցման շարժական դիմակ են ներառում,
- սուզման սարքավորումներ,
- սուզահագուստ:

ՁԵՌՔԻ ԵՎ ԲԱԶՈՒԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- ձեռնոցներ, որոնք պաշտպանում են.
- հաստոցներից (ծակում, կտրում, տատանումներ և այլն)
- քիմիական նյութերից
- էլեկտրատեխնիկայից և ջերմությունից
- թաթմաններ,
- մատնոցներ,
- թևքանոցներ,
- դաստակի պաշտպանություն ծանր աշխատանքի դեպքում,
- առանց մատների ձեռնոցներ
- պաշտպանիչ ձեռնոցներ:

ՈՏՆԱԹԱԹԵՐԻ ԵՎ ՈՏՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- ցածրակրունկ կոշիկներ, ճտքավոր կոշիկներ մինչև սրունքները և սրունքներից վերև,
- կոշիկներ, որոնց կապերը կամ ճարմանդներն արագորեն քանդվում են
- լրացուցիչ պաշտպանիչ կոշկաքթով կոշիկներ,
- ջերմադիմացկուն ներբանով կոշիկներ և կրկնակոշիկներ,
- ջերմադիմացկուն կոշիկներ, երկարաճիտ կոշիկներ և կրկնակոշիկներ,
- տաքացնող կոշիկներ, երկարաճիտ կոշիկներ և կրկնակոշիկներ,
- թրթռակայուն կոշիկներ, երկարաճիտ կոշիկներ և կրկնակոշիկներ,

- հակաստատիկ կոշիկներ, երկարաճիտ կոշիկներ և կրկնակոշիկներ,
- մեկուսացում ապահովող կոշիկներ, երկարաճիտ կոշիկներ և կրկնակոշիկներ,
- պաշտպանական երկարաճիտ կոշիկներ՝ շղթայական սղոցների օպերատորների համար,
- փայտյա կոշիկներ,
- պաշտպանիչ ծնկակալներ
- ոտնաթումբի հանովի պաշտպանիչներ,
- զանգապաններ,
- հանովի ներբաններ (ջերմադիմացկուն, պատռվածքադիմացկուն կամ չքրտնեցնող),
- հանովի բութակներ սառույցի, ձյան կամ սահուն մակերեսների համար:

ՄԱՇԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- պաշտպանիչ քսուքներ, յուղեր

ԻՐԱՆԻ ԵՎ ՈՐՈՎԱՅՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- պաշտպանական բաճկոնակներ, բաճկոններ և գոգնոցներ հաստոցներից (ծակում, կտրում, հալած մետաղի ցայտեր և այլն) պաշտպանվելու համար,
- պաշտպանական բաճկոնակներ, բաճկոններ և գոգնոցներ՝ քիմիական նյութերից պաշտպանվելու համար,
- Տաքացված բաճկոնակներ,
- փրկարարական բաճկոններ,
- ռենտգենյան ճառագայթներից պաշտպանող գոգնոցներ,
- բանդաժներ:

ԱՄԲՈՂՋ ՄԱՐՄՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- ընկնելը կանխելու համար նախատեսված սարքավորումներ,
- ընկնելը կանխելու համար նախատեսված սարքավորումներ (ամբողջական սարքավորումներ՝ անհրաժեշտ բոլոր պարագաներով),

- կինետիկ էներգիայի կլանման համար նախատեսված արգելակող սարքավորումներ (ամբողջական սարքավորումներ՝ անհրաժեշտ բոլոր պարագաներով),
 - մարմինը պահող հարմարանքներ (անվտանգության գոտի)
 - պաշտպանական հագուստ
 - «Անվտանգության» աշխատանքային հագուստ (վերևի և ներքևի մասեր և արտահագուստ),
 - հաստոցներից (ծակում, կտրում և այլն) պաշտպանվելու համար նախատեսված հագուստ,
 - քիմիական նյութերից պաշտպանվելու համար նախատեսված հագուստ,
 - հալած մետաղի ցայտերից և ինֆրակարմիր ճառագայթումից պաշտպանվելու համար նախատեսված հագուստ,
 - ջերմադիմացկուն հագուստ,
 - տաքացնող հագուստ,
 - ռադիոակտիվ ճառագայթահարումից պաշտպանվելու համար նախատեսված հագուստ,
 - փոշի չկլանող հագուստ,
 - գազեր չկլանող հագուստ,
- Ֆլուորեսցենտ ազդանշանող, լուսանդրադարձող հագուստ և պարագաներ (թևկապներ, ձեռնոցներ և այլն),
- պաշտպանական ծածկեր:

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՈՉ ՍՊԱՌԻՉ ՑԱՆԿ-
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

1. ԳԼԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (ԳԱՆԳԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ)

Պաշտպանական սաղավարտներ

- Շինարարական աշխատանքները, մասնավորապես՝ աշխատանքը լաստակների և բարձրության վրա գտնվող աշխատավայրերի վրա, տակ կամ մոտակայքում, աշխատանքային հարթակների մոնտաժման ու ապամոնտաժման, հավաքման և տեղադրման աշխատանքները, լաստակների վրա աշխատանքն ու քանդման աշխատանքները:

- Աշխատանքը պողպատե կամուրջների վրա, պողպատե շինությունների կառուցումը, կայմասյունների, աշտարակների, պողպատե հիդրավլիկ կառույցների, դոմնային վառարանների, պողպատածուլարանների և գլոցահաստոնների, մեծ տարաների, մեծ թողունակությամբ խողովակաշարերի, բոյլերային սարքավորումների և էլեկտրակայանների հետ կապված աշխատանքը:

- աշխատանքը փորվածքներում, հորիզոնական փորվածքներում, հանքահորերում և թունելներում,

- հողային շերտի հեռացման և օգտակար հանածոներ պարունակող ապարների օգտահանման աշխատանքներ,

ստորերկյա հանքափորվածքներում, քարհանքերում, բացահանքերում, ածխի պաշարների հանում,

- պտուտակ և գայլիկոն պտտող գործիքների հետ աշխատանքը,

- պայթեցման աշխատանքները,

- ամբարձիչների, ամբարձիչ սարքավորման, կռունկների և փոխակրիչների մոտակայքում աշխատանքը,

- դոմնային վառարանների, ուղղակիորեն վերականգնման տեխնոլոգիայով երկաթի արտադրամասերի, պողպատածուլարանների, գլոցահաստոնների հետ կապված, ինչպես

նաև մետաղամշակման, դարբնոցամամլիչային, մուրճի հարվածով դրոշմման և լցակաղապարման աշխատանքներ:

- արդյունաբերական վառարանների, կոնտեյներների, մետաղամշակման սարքավորումների, սիլոսապահեստների, զետեղարանների և խողովակաշարերի հետ կապված աշխատանքներ:

- Նավաշինություն

- երկաթուղային մանևրային աշխատանքներ,

- սպանդանոցները:

2. ՈՏՆԱԹԱԹԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատռվածքադիմացկուն ներբանով, անվտանգ աշխատանքի համար նախատեսված՝ պատռվածքադիմացկուն ներբանով կոշիկներ

- շենքի կմախքի մոնտաժման, հիմքի կառուցման և ճանապարհային աշխատանքներ,

- աշխատանքը լաստակների վրա,

- ներքին ցանցերի և կմախքի ապամոնտաժումը,

- բետոնի և պատրաստի բլոկների հետ աշխատանքը՝ ներառյալ աշխատանքային հարթակների մոնտաժումը և ապամոնտաժումը,

- աշխատանքը շինարարական կազմակերպության շինարարական հրապարակում և պահեստներում,

- տանիքի հետ կապված աշխատանքներ:

Պատռվածքադիմացկուն ներբան չունեցող, անվտանգ աշխատանքի համար նախատեսված կոշիկներ

- աշխատանքը պողպատե կամուրջների վրա, պողպատե շինությունների կառուցումը, կայմասյունների, աշտարակների, վերելակների, պողպատե հիդրավլիկ կառույցների, դոմնային վառարանների, պողպատի հետ կապված աշխատանքները և գլոցահաստոնների, մեծ տարաների, մեծ թողունակությամբ խողովակաշարերի, բոյլերային սարքավորումների և էլեկտրակայանների հետ կապված աշխատանքը:

- վառարանների կառուցման, ջեռուցման և օդափոխության համակարգի տեղադրում ու մետաղական մասերի հավաքման աշխատանքներ,

- ձևափոխման և պահպանման աշխատանքներ,

- դռնային վառարանների, ուղղակիորեն վերականգնման տեխնոլոգիայով երկաթի արտադրամասերի, պողպատաձուլարանների, գլոցահաստոնների հետ կապված, ինչպես նաև մետաղամշակման, դարբնոցամամլիչային, մուրճի հարվածով դրոշմման և լցակաղապարման աշխատանքներ,

- աշխատանքը քարհանքերում և բացահանքերում, ածխի պաշարների հանումը,

- քարի մշակում և վերամշակում,

- թերթավոր ապակե արտադրանքի և ապակե տարաների արտադրությունը, մշակումն ու վերամշակումը:

- խեցեգործական արտադրության մեջ կաղապարների հետ աշխատանքը,

- խեցեգործական արտադրության մեջ թրծավառարանների աղյուսապատումը,

- կերամիկական իրերի և շինարարական նյութերի արտադրության մեջ կաղապարման աշխատանքը,

- փոխադրում և պահպանում,

- աշխատանքը սառեցված մսի բլոկների և պահածոյացված սննդամթերքի փաթեթվածքի հետ,

- նավաշինություն,

- երկաթուղային մանևրային աշխատանքներ:

Անվտանգ աշխատանքի համար նախատեսված՝ կրունկներով, տանկետկայով և պատռվածքադիմացկուն ներբանով կոշիկներ

- տանիքի հետ կապված աշխատանքներ,

մեկուսացում ապահովող ներբաններով պաշտպանական կոշիկներ

- աշխատանքը շատ տաք կամ շատ սառը նյութերի հետ կամ դրանց վրա,

անվտանգ աշխատանքի համար նախատեսված կոշիկներ, որոնք հնարավոր է հեշտությամբ հանել,

- եթե հավված նյութերի ներթափանցման վտանգ կա:

3. ԱԶՔԵՐԻ ԵՎ ԴԵՄՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանական ակնոցներ, դիմակալներ կամ դեմքի պաշտպանության վահանակներ

- եռակցման, հղկման և առանձնացման աշխատանքներ,

- խցում և շրջահատում,

- քարի մշակում և վերամշակում,

- Պտուտակ և գայլիկոն պտտող գործիքների հետ աշխատանքը,

- Շերտահեռացման մեքենաներ՝ նախատեսված մանր խճառակների համար,

- մուրճի հարվածով դրոշմում,

- բեկորների հանումը և մասերի բաժանումը,

- հղկանյութերի փչումը,

- թթուների և կծու լուծույթների, վարակազերծիչ միջոցների և քայքայիչ ազդեցությամբ մաքրող միջոցների հետ աշխատանքը,

- հեղուկների աերոզոլների հետ աշխատանքը,

- աշխատանքը հավված նյութերի հետ կամ դրանց մոտակայքում,

- ճառագայթային ջերմության հետ կապված աշխատանքը,

- լազերների հետ աշխատանքը:

4. ՇՆՉԱՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Շնչադիմակներ (շնչառական սարքեր)

- Աշխատանքը, որը կապված է կոնտեյներների հետ, այնպիսի տարածքների, որտեղ կողմնակի անձանց մուտքը արգելված է, ինչպես նաև գազով աշխատող արդյունաբերական վառարանների հետ, որտեղ կարող է գազ լինեն կամ ոչ բավարար քանակով թթվածին,

- աշխատանքը դոմնային վառարանի բովախառնուրդի մոտ,

- աշխատանքը գազի փոխակերպիչների և դոմնային վառարանի գազի խողովակների մոտ,

- աշխատանքը դոմնային վառարանի ծորակի մոտ, որտեղ կարող են լինել ծանր մետաղի փոշիներ,
- աշխատանքը, որը կապված է վառարանի ներպատվածքի և շերտիների հետ, որտեղ կարող է փոշի լինել,
- ներկում աերոզոլային սարքով, երբ փոշեզերծումը բավարար չափով չի կատարվում
- աշխատանքը հանքահորերում, կոյուղիներում և ջրահեռացման հետ կապված ստորգետնյա այլ վայրերում

5. ԼՍՈՂԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ականջապաշտպանիչներ

- աշխատանքը մետաղի մամլիչների հետ,
- աշխատանքը պնևմագայլիկոնիչի հետ,
- օդանավակայաններում վերգետնյա անձնակազմի աշխատանքը,
- ցցերի խփման աշխատանք,
- փայտամշակման և մանածագործական աշխատանքը:

6. ՄԱՐՄՆԻ, ԲԱԶԿԻ ԵՎ ԶԵՌՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանական հագուստ

- թթուների և կծու լուծույթների, վարակազերծիչ միջոցների և քայքայիչ ազդեցությամբ մաքրող միջոցների հետ աշխատանքը,
- աշխատանքը բարձր ջերմաստիճանի նյութերի հետ կամ դրանց մոտակայքում և այնտեղ, որտեղ զգացվում է բարձր ջերմաստիճանի ազդեցությունը:
- թերթավոր ապակիների հետ կապված աշխատանքը,
- կոտորուքային մաքրման աշխատանքները,
- աշխատանքը սառցախցիկներում:

Հրակայուն հագուստ.

- եռակցումը այնպիսի տարածքներում, որտեղ կողմնակի անձանց մուտքը արգելված է

Պատռվածքադիմացկուն գոգնոցներ

- մսաթափում և կտրատում,
- ձեռքի դանակներով աշխատելը, այդ թվում՝ դանակը մարմնի ուղղությամբ շարտելը

Կաշվե գոգնոցներ

- եռակցում,
- դարբնոցամամլիչային աշխատանքներ
- լցակաղապարման աշխատանքներ

Նախաբազկի պաշտպանություն

- մսաթափում և կտրատում,

ձեռնոցներ

- եռակցում,
- սրածայր առարկաների (ոչ մեքենաներ) հետ գործ ունենալը, երբ վտանգ կա, որ ձեռնոցը կարող է բռնվել,
- թթուների և կծու լուծույթների հետ չպաշտպանված աշխատանքը,

Մետաղյա ցանցավոր ձեռնոց (մետաղական ցանցավոր գործվածքով ձեռնոց)

- մսաթափում և կտրատում,
- ձեռքի դանակի միջոցով պարբերաբար կտրատելը՝ արտադրության և սպանդի համար,
- կտրող գործիքների դանակները փոխելը:

7. ՎԱՏ ԵՂԱՆԱԿԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՂ ՀԱԳՈՒՍՏ

- անձրևի և ցուրտ եղանակի պայմաններում բացօթյա աշխատանքը:

8. ԱՆԴՐԱԴԱՐՁՆՈՂ ՀԱԳՈՒՍՏ

- այնպիսի աշխատանք, որի դեպքում աշխատողները պետք է հստակորեն տեսանելի լինեն:

9. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐ

- աշխատանքը լաստակների վրա,

- պատրաստի մասերի հավաքումը,

- աշխատանքը կայմասյունների վրա:

10. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՆՆԵՐ

- աշխատանքը կռունկների բարձր խցիկներում

- աշխատանքը պահեստներում տեղավորելու և վերցնելու համար նախատեսված հարմարանքի բարձր խցիկներում,

- աշխատանքը հորատային աշտարակների բարձր մասերում,

- աշխատանքը հանքահորերում և կոյուղում:

11. ՄԱՇԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- մածկման նյութերի վերամշակում,

- դաբաղում: